



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ



Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի և
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև

Յուլիսի 17, 2012թ.

ք. Վիտեբսկ

Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի գործադիր կոմիտեի նախագահ մի կողմից և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետը մյուս կողմից այսուհետ՝ «Կողմեր», հաշվի առնելով Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության Պայմանագրի դրույթները, ինչպես նաև տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության խորացման և ընդլայնման փոխադարձ հետաքրքրությունները, առաջնորդվելով հավասարության և փոխշահավետության սկզբունքներով, պայմանավորվեցին հետևյալի մասին.

Յոդված 1.

Կողմերը ուսումնասիրում են համագործակցության զարգացման հնարավորությունները հետևյալ ուղղություններով.

- արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի ոլորտներում
- կրթության, բնակչության առողջապահության և սոցիալական պաշտպանվածության, գիտության և տեխնիկայի ոլորտներում
- ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում
- զբոսաշրջության, սպորտի, մշակույթի, արվեստի և երիտասարդության հարցերի ոլորտներում
- շրջակա միջավայրի պաշտպանության և բնական պաշարների օգտագործման ոլորտներում
- տեղական ինքնակառավարման ոլորտում

Յոդված 2.

1. Կողմերը նպաստում են տնտեսության զարգացմանը, նոր տեխնոլոգիաների կիրառմանը, ներդրումների, փոխշահավետ առևտրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:
2. Կողմերը, բարենպաստ պայմաններ են ապահովում ձեռնարկատիրական կառույցների զարգացման, համատեղ ձեռնարկությունների և բաժնետիրական ընկերությունների ստեղծման համար:

Յոդված 3.

1. Կողմերը տնտեսության զարգացման նպատակով փոխանակում են վերոհիշյալ համագործակցության ոլորտների հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, ապահովում են ձեռնարկությունների, կազմակերպությունների, գործարարների մասնակցությունը կազմակերպվող գործարար համաժողովներին, ցուցահանդեսներին և տոնավաճառներին:

2. Կողմերը, իրենց լիազորությունների շրջանակներում, անհաժեշտ աջակցություն են ցուցաբերում տնտեսական գործընկերներին ուղղակի համաձայնագրերի և պայմանագրերի կնքման գործում՝ անկախ սեփականության ձևից:

Հոդված 4.

Կողմերը մտադիր են մոտակա ժամկետներում ստորագրել «Առևտրի, տնտեսական, զիտատեխնիկական և մշակութային համագործակցության» շրջանակային համաձայնագիր:

Հոդված 5.

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է մինչև կողմերից մեկը գրավոր կտեղեկացնի մյուս կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին: Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցվի մյուս կողմի ծանուցումը ստանալու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում:

Սույն Համաձայնագիրը ընդունված է 2012թ. հուլիսի 17-ին, Վիտեբսկ քաղաքում, չորս բնօրինակով՝ զրված ռուսերենով և հայերենով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Բելառուսի Հանրապետության
Վիտեբսկի մարզի կողմից
մարզի գործադիր կոմիտեի

Նախագահ



Ա.Ն.ԿՈՍԻՆԵՑ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի կողմից

Մարզպետ



Ա.Լ.ՆԱԼԲԱՆՅԱՆ